ՏԵՂԵԿԱՆՔ

Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետայի հարցերի մշտական հանձնաժողովի 8-րդ գումարման 1-ին և 2-րդ նստաշրջանի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

1. Կայացած նիստերի քանակը կազմել է 21-ը՝ 4 հերթական, 5 արտահերթ և 12՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների հետ համատեղ նիստեր («Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի նախնական քննարկումների):

2. Հանձնաժողովը գլխադասային է նշանակվել՝ **11 օրենքի նախագծի** (որոնցից՝ 1 օրենքների նախագծերի փաթեթ)՝ ընդունվել են ամբողջությամբ՝ 1, դուրս է եկել շրջանառությունից՝ 0, դեռեւս չեն ընդգրկվել օրակարգում՝ 0, ընդգրկվել են օրակարգում՝ 10 (որոնք քննարկվել եւ քվեարկվել են 1-ին ընթերցմամբ):

3. **Նիստերի ընթացքում քննարկվել են՝**

3.1. **Օրենքների նախագծեր՝ թվով 11, որոնցից.**

- **1 ընդունվել է ամբողջությամբ՝**

1) Կ- 059.«Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքը, Հեղինակ՝ ՀՀ Կառավարություն:

- **10 ընդգրկվել են օրակարգում, քննարկվել եւ ընդունվել են 1-ին ընթերցմամբ՝**

1) Կ- 061. Անկանխիկ գործառությունների մասին, Հեղինակ՝ ՀՀ Կառավարություն, (Հիմնական զեկուցող՝ Վախթանգ Աբրահանյան),
2) Կ-061[1]. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին»,
3) Կ-061[2]. «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին»,
4) Կ-061[3]. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին»,
5) Կ- 061[4] «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին,
6) Կ- 061[5] «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին,

7) Կ-061[6]. «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին,
8) Կ-061[7]. «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին,
9) Կ- 061[8] « Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»
10) Պ- 052 «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

3.2. Տեղեկանքներ /թվով 5/.

1) 2021 թվականի պետական բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկանքը,
2) 2021 թվականի պետական բյուջեի առաջին կիսամյակի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկանքը,
3) 2021 թվականի պետական բյուջեի ինը ամիսների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկանքը,
4) Բյուջետային գրասենյակի հաշվետվությունը՝ 2021 թվականի երկրորդ եռամսյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:
5) Բյուջետային գրասենյակի հաշվետվությունը՝ 2021 թվականի երրորդ եռամսյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

3.3. Հանձնաժողովի որոշումներ /թվով 3/.

1. Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների օրինակելի աշխատակարգը սահմանելու մասին» Ազգային ժողովի խորհրդի 2017 թվականի հունիսի 12-ի որոշումը՝ Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը որոշում է.
   - Հաստատել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի աշխատակարգը»՝ համաձայն հավելվածի:

2. Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

   - Սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովում քաղաքացիների ընդունելության կազմակերպման

2021-2022 թվականների տարեկան ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

3. Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 115-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը որոշում է.
    - Հրավիրել համատեղ նիստեր՝ ԱԺ Տարացքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի և Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի հետ՝ համապատասխան օրակարգերով:

3.4 «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2022 թվականի վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների նախագիծը /թվով 12 նիստ/ (Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների հետ համատեղ նախնական քննարկումների կազմակերպում և իրականացում):

3.5 «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի համաձայն՝

1) Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի անդամի թեկնածության և Ազգային ժողովին այդ պաշտոնին թեկնածու առաջարկելու վերաբերյալ քննարկում (Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի անդամի թափուր տեղի համար Ազգային ժողովին առաջարկեց "Քաղաքացիական պայմանագիր" խմբակցության կողմից ներկայացված Եղիշե Հենրիկի Սողոմոնյանի թեկնածությունը),

2) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի անդամի թեկնածության և Ազգային ժողովին այդ պաշտոնին թեկնածու առաջարկելու վերաբերյալ քննարկում (Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի անդամի տեղի համար Ազգային ժողովին առաջարկեց " Քաղաքացիական պայմանագիր " խմբակցության կողմից ներկայացված Արտակ Չուբարի Մանուկյանի թեկնածությունը):

3.6 «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 115-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն կայացել են երկու համատեղ նիստ հետևյալ օրակարգերով՝

- 16.12.2021թ ԱԺ Տարացքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի հետ համատեղ

քննարկել ՀՀ Հաշվեքննիչ պալատի Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում ՀՀ 2021թ. պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունները:

- 24.12.2021թ ԱԺ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի հետ համատեղ քննարկել ՀՀ Հաշվեքննիչ պալատի Էկոնոմիկայի նախարարությունում ՀՀ 2021թ. պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունները:

4. **Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 17-ի նիստում ընդունած որոշման համաձայն (ինչը վերաբերվում է քաղաքացիների 2021-2022 թվականների ընդունելության տարեկան ժամանակացույցի հաստատմանը)՝ 2-րդ նստաշրջանի ընթացքում հանձնաժողովը ունեցել է 4 ընդունելություն, թվով 24 քաղաքացիների համար:**

5. **ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվել է ԱԺ կայքի հանձնաժողովի էլեկտրոնային էջում:**